



The Holy Ascension Armenian Church



ՍՈՒՐԲ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

1241 Barnum Avenue, Bridgeport, Conn. 06610 Tel. 333-8475

Փետրուար 9, 1969

Pastor

Rev. Fr. Guregh Kalfayan

Սիրելի անդամներ,

Աստուծոյ կամքով ու Զեր բոլորին ժրաշան աշխատութեամբ ու Զեր բերած նիւթական եւ բարոյական օժանդակութեամբ, այս Եկեղեցին բոլորեց յաջող ու կենսունակ տարի մը: Մյզի համար մեծ հպարտութիւն է նոս արձանագրել մեր գոհունակութիւնը Բեմիս Առաջնորդ Գերաշնորհ: Տ. Շորջում Արք Յափիս Սանուկեանի, Թեմական Խորհուրդի անդամներուն եւ Ս. Համբարձում Հայց: Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդին ու Ծուխին բոլոր անդամներուն: որ նախ դուք մեզ ընդունեցիք Զեր Հոգեւոր Հովհիւը եւ ապա Բեմիս Առաջնորդին կողմէ վաւերացուեցաւ առ այդ օգոստոս 14, 1969:

Հնդ: Ակնարկ .— Մեր գործումէութեան ընդ: դասաւորումը կը փափաքինք ընել ըստ հետեւեալին ներառեալ մի միայն 1968ի չորս ամիսները: Մեր չորս ամսուայ գործունէութիւնը կը կայանայ հետեւեալ կէտերու մէջ: — Ժամապաշտութիւն, Ծիսակատարութիւն, Վարչական ու Կազմակերպչական ժողովներ, Կիրակնօրեայ Վարժարան ու Հայ Դպրոց, Հայ Եկեղեցական ժրատարող Կազմակերպութիւն, այցելութիւններ, "տուներու եւ հիւանդանոցներու եւ սգակիրներու", Ծխական Թերթիկ ու այլ հրատարակութիւններ:

Ժամապաշտութիւն

Օգոստոս 14, 1968էն ըսկսեալ անխափան ամէն Կիրակի օր կատարած ենք Ժամերգութիւն եւ Ս. Պատարագ մատուցած ենք և քարոզած մեր հաւատացեալ ժողովուրդին: Այս Կիրակիներուն մեզի հետ ունեցած ենք որպէս Ուրարակիր Սարկաւագ Տիար Վարդան Սթամպուլեանը, եւ քանի մը անդամներ իրեն օգնական Տիար Վարդան Թարփինեա եւ Ռուբեն Ճամբարեանը: Մեր գոհունակութիւնը կը յայտնենք իրենց բերած այս նուրիկան ծառայալթեանց համար: Միաւունական ծառայալթեանց համար:

Պւնեցած ենք երկու Դրօշմ եւ մէկ Թաղում:

Վարչական ու Կազմակերպչական ժողովներ

Ս. Համբարձում Հայց: Եկեղեցւոյ Հոգեւոր Հովհիւ մեր նշանակումէն ի վեր մեր մասնակցութիւնը բերած ենք Ծխական Խորհուրդի 17 ժողովներուն, եւ մէկ բացառիկ ժողովին: Եւ նախագահած ենք մէկ ոչ օրինական եւ մէկ Օրինակոր Ծխական ժողովներուն:

Այս ժողովներուն բերած ենք մեր գործոն մասնակցութիւնը ընելով մեր թելադրութիւնները ու տալով մեր Ծրագիրները Եկեղեցւոյ Պայծառացման համար:

Այս առթիւ կուգամ իմ գոհնանակութիւնս յայտնել Ծխական Խորհուրդի բույր անդամներուն եւ Տիար Ատենապետ Թամ Ալբունեանին, իր ըրած բացառիկ ժողովւնէրւեանց համար: Եւ նոս կուզեմ արձանագրել իմ ու ընտանիքիս անդամներուն գոհանակութիւնն ու շնորհակալութիւնը Տիար Ճեք Տէմիքճեանի,



The Holy Ascension Armenian Church



ՍՈՒՐԲ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

1241 Barnum Avenue, Bridgeport, Conn. 06610 Tel. 333-8475

Pastor

Rev. Fr. Guregh Kalfayan

իր բերած բացառիկ աշխատանքին մեր բնակարանը գտնելուն մէջ : Եւ յետոյ Ծխական Խորհուրդի երկու անդամներուն Տիար Թամ Ալթունեանին եւ էտ ծիվահրճեանին ու Ծխական Խորհուրդի միւս անդամներուն համար :

Կիրակնորեայ Վարժարան .-

Մեզի համար մեծ երջանկութիւն է տեսնել որ, Եկեղեցւոյ Կիրակնորեայ Վարժարանը իր կազմակերպչական ու յառաջիդմութեան վիճակին մէջ կը գտնուի : Անուշտ անոր յաջողութիւնը կարելի պիտի չըլլար առանց երբէք Խորհրդական Տեսութիւն եւ Ուսուցչական Կազմին : Ուրախ ենք հոս արձանագրելու որ այս տարի ունինք 65 աշակերտութիւն բաժնուած իր վեց դասարաններով :

Մեր գոհն և նակութիւնը կը յայտնենք Տիկ . Թերեսա Հայրապետեանի ու իր Ուսուցչական կազմին իրենց բերած բացառիկ յաջողութիւններուն համար :

Հայ Դպրոց

1968ի եւ 1969ի տարուայ մեր Հայ Դպրոցը բացուեցաւ անցեալ Դեկտեմբերին : Ուրախ ենք յայտարարելու որ այժմ ունինք 34 աշակերտութիւն ։ Դասաւանդութիւններ տեղի կունենան Զորեքշաբթի երեկոյ Մեծերուն իսկ Ուրբաթ Կէսօրեն Վերջ ժամը 4էն մինչեւ 5:30 Փոքրերուն Տիր եւ Տիկ . Թամ Ալթունեանին բնակարանին մէջ , իսկ Շաբաթ առաւօտ հոս Եկեղեցւոյ սրահին մէջ :

Այս առթիւ մեր գոհն և նակութիւնը կը յայտնենք Ծխական Խորհուրդին որ յանձն առաւ Կազմակերպելու Հայ Դպրոցը , եւ Տէր եւ Տիկ . Թամ Ալթունեանին :

Դպրաց Դաս

Մեր ու շաղը ութենէն չվրիպեցաւ Եկեղեցւոյս Դպրաց Դասը : Մեր հոս Հոգեւոր Հովի և նշանակումեն անմիջապէս յետոյ , մեր աշխատանքը ըրինք միասին գալու Դպրապետուէ ի Տիկ . Գեղանոյ Սթամպուլեանին հետ , ու իրարու հետ Խորհուրդակցաբար եւ գործակցաբար որոշեցինք ընել Դպրաց Դասի փորձեր աւելի ներդաշնակ ու ալեհ քաղցր երգեցողութեան համար : Ուրախ ենք որ , մեր այս փափաքին գոհացում տուին Դպրաց Դասի անդամները , եւ ըսկսան հետաքրքրութեամբ մասնակցիլ փորձերուն եւ Կիրակի օրուայ երգեցողութեան :

Մեր շնորհակալութիւնն ու գոհն և նակութիւնը կը յայտնենք Տիկ . Գեղանոյ Սթամպուլեանին ու Դպրաց Դասի անդամներուն :



The Holy Ascension Armenian Church



ՍՈՒՐԲ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅՑ

1241 Barnum Avenue, Bridgeport, Conn. 06610 Tel. 333-8475

Pastor
Rev. Fr. Guregh Kalfayan

Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդ Կազմակերպութիւն

Ինչպէս Եկեղեցւոյ միւս Կազմակերպութիւններուն հետ պահած ենք մեր սերտ յարաբերութիւնը, նոյն պէս ուզած ենք մեր ուշադրութենէն չվրիպեցնել Եկեղեցւոյս այս Կազմակերպութիւնընթիւնց հետ ունեցած ենք Վարչական եւ անդամկան ժողովներ ու բերած ենք մեր գործոն մասնակցութիւնը, տալով իրենց ծրագիրներ ւո անհրաժեշտ թելադրութիւնը:

Մեր գոհունակութիւնը կը յայտնենք, իր ատենապետին Պրո. Թարփինեանին, եւ յատկապէս Օք. Սէրի Անն Խաչտուրեանին իրենց բարոյական իւնիւթական օժանդակութեանց համար:

Հրատարակութիւններ

Մեր սրտին մէջ բացառիկ տեղ կը գրաւէ Եկեղեցւոյ կողմէ եղած բոլոր հրատարակութիւնները: Մենք կը հաւատանք որ մեր ժողովուրդին հետաքրքրութիւնը եւ հաւատքը միշտ կենսունակ ու կենդանի պահելու լաւագոյն միջոցներէն մէկն է նաև հրատարակութիւնը: Անցեալ չորս ամիսներու ընթացքին թերթով եւ թէ մասնաւոր ծանուցումներով մեր ժողովուրդը տեղեակ պահեցինք Եկեղեցւոյ կեանքին շուրջ: Կը հաւատանք որ ահս տարի աւելի յստակ ու շարունակական կը դարձնենք մեր այս հրատարակութիւնները:

Հրատարակած ենք երկու թերթ, եւ մօտաւորապէս տասք մասնաւոր ծանուցումներ:

Ծխական Այցելութիւններ

Հոգեւորականի մը համար մեծ է գոհունակութիւնը երբ ան կայցելէ իր ժողովուրդին, տալով անոնց հոգեւոր սնունդ եւ մխիթարութիւն:

Մեր այցելութիւններուն ընդհանուր թիւը եղած է մօտաւորապէս 60, ի բաց առաեալ մեր այցելութիւններէն որ եղած են Հիւանդանոցներ, տուններու մէջ եղած հիւանդներուն եւ սգաւորներուն, որոնց ընդհանուր թիւը կը հասնի մօտաւորապէս 25ի: Ըրած ենք նաև հեռածանով հաղորդակցութիւններ:

Կը յուսանք ու կաղթենք որ յառաջիկային մեր այցելութիւնները կը լաւ աւելի կանոնաւոր եւ յաճախակի:

ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաջնորդարանին հետ ու այլ պաշտօնական թղթակցութիւններ եղած են մեր կողմէ:



The Holy Ascension Armenian Church



ՍՈՒՐԲ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵԼՑԻՑ

1241 Barnum Avenue, Bridgeport, Conn. 06610 Tel. 333-8475

Pastor
Rev. Fr. Guregh Kalfayan

Գանսըլ ԱԺ Զըրչըս ամ Պրիճիորթ

Պրիճիորթի Գանսըլ ԱԺ Զըրչըսի հետ պահած ենք մեր յարաբերութիւնը ըլլայ հեռաձայնի հաղորդակցութեամբ եւ այցելութիւններով։ Այս առթիւ մեր նպատակը եղած է պահել սերտ յարաբերութիւն միւս եկեղեցիներու հետ, ու ծանօթացնել մեր եկեղեցին ուրիշներուն։

Տիկնանց Միութեան Անդամական ժողովներ

Մեր մասնակցութիւնը բերած ենք Տիկնանց Միութեան անդամական ժողովներուն, եւ նախագահած ենք, եւ ըրած ենք անհրաժեշտ թելադրութիւն մաշակելով Ծրագիրներ իրենց ապագայ գործունեութեանց համար։

Դասախութիւններ

1968 տարուայ Պազարի ճաշկերոյթներուն առթիւ տուած ենք երկու դասախութիւն Հայ եւ Եկեղեցւոյ Կեանքին շուրջ։

Գոհունակութիւններ

1969 տարուայ այս Ծխական ժողովին մէջ կուցենք արձանագրել մեր գոհունակութիւնը ըստ հետեւեալին։

Ծխական ժողովին մասնակցող բոլոր անդամներուն։

Ծխական Խորհուրդի անդամներուն։

Տէր եւ Տիկ. Վարդան Սթամպուլեանին իրենց բերած բացառիկ ծառայութեանց համար։

Տէր եւ Տիկ. Կարպիս Ճիվահիրենեանին որ Մեր տան փոխադրութեան միջոցին մեզ ընդունեցին իրենց բնակարանին մէջ եւ տուին պէտք եղած խնամքը ու հոգատարութիւնը։

Մեր գոհունակութիւնը, Տքթ. Ճ. Էթմէքնեանի որպէս Երեսփոխան այս Եկեղեցւոյ, եւ Տքթ. Պերճ Հայրապետեանի որպէս անձնափոխանորդ։

Մեր գոհունակութիւնը Ծուխիս բոլոր անդամներուն իրենց բերած բարոյական եւ նիւթական օժանդակութեանց համար։

Եկեղեցական Ծուխի Առաջնորդ